ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2019

**Մեկնարկեց «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2019»-ի հայտերի ընդունումը**

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է «Երիտասարդական մրցանակաբաշխություն-2019» ծրագրի մեկնարկը:

Ծրագրի նպատակն է հանրային կյանքին երիտասարդների մասնակցության խթանումը, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացումը, որն իրականացվում է տվյալ տարվա ընթացքում նշանակալի հաջողություններ ցուցաբերած երիտասարդների, երիտասարդական խմբերի և երիտասարդական հասարակական կազմակերպությունների խրախուսման, նրանց ձեռքբերումների արժևորման միջոցով:

Մրցանակաբաշխությունն անցկացվում է հետևյալ անվանակարգերում՝

**1) Երիտասարդ բժիշկ,**
**2) Երիտասարդ բնապահպան,**
**3) Երիտասարդ գյուղատնտես,**
**4) Երիտասարդ գիտնական,**
**5) Երիտասարդ մշակութային գործիչ /կոլեկտիվ,**
**6) Հայրենիքի երիտասարդ պաշտպան,**
**7) Երիտասարդական աշխատող,**
**8) Երիտասարդ մարզիկ,**
**9) Երիտասարդ հայրենադարձ,**
**10) Երիտասարդ գործարար,**
**11) Տարվա երիտասարդ:**

Հայտերն ընդունվում են առցանց՝ https://youthaward.am/ կայքի միջոցով, **մինչև ս.թ. նոյեմբերի 23-ը ներառյալ**: Առցանց հայտը



info@youthaward.am
www.youthaward.am

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ 2019

կարող է լրացնել յուրաքանչյուր անձ առաջարկելով 2019 թվականի ընթացքում իրենց նշանակալի ձեռքբերումներով աչքի ընկած 16-30 տարեկան երիտասարդների, երիտասարդական խմբերի (խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի երիտասարդ) թեկնածություններ՝ նշված 11 անվանակարգերից յուրաքանչյուրում:

Երիտասարդական մրցանակաբաշխություն 2019

info@youthaward.am
www.youthaward.am